AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

29 դեկտեմբերի 2021 թվականի N ՑԲ-003-12/21

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Բ ԴԱՍԻ ՓՈԽԱՐԿԵԼԻ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Բ) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող) կողմից 2021 թվականի հոկտեմբերի 22-ին ներկայացված հայտը 1,099,000,030 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 230 ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 հատ Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը ցուցակելու և բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 29-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 10-րդ գլխի 52 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 1,099,000,030 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 230 ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 հատ Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMUNIBPK2ER3 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում, շնորհել UNIBP2 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 04-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**